ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Համագործակցություն հանուն սոցիալական ազդեցության. Սոցիալական ձեռներեցության և սոցիալական ներդրումների զարգացում Արևելյան գործընկերության և Ռուսաստանի միջև տնտեսական և սոցիալական համագործակցության նպատակով



Իրականացման ժամանակահատված: 01.09.2020 - 31.08.2025

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 000 000

Ընդհանուր բյուջե: € 5 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

European Venture Philanthropy Association (EVPA)

Նախագծի կայքէջ: impacteurope.net/stream/eastern-europe-market-building

Նախագծի նկարագրություն:

Ծրագիրը նպատակ ունի նպաստել Արևելյան գործընկերության տարածաշրջանում սոցիալական ձեռներեցության համար ավելի բարենպաստ էկոհամակարգի կառուցմանը: Դա տեղի կունենա իրազեկության բարձրացման, սոցիալական նորարարության խթանման և քաղաքականություն մշակող ու որոշումներ կայացնող տարբեր շահագրգիռ կողմերի հետ համապատասխան փոխանակումների միջոցով, ինչը, ի վերջո, կհանգեցնի տարածաշրջանում սոցիալական ներդրողների ու սոցիալական ձեռնարկատերերի թվի ավելացմանը և համագործակցության ամրապնդմանը: Արդյունքում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և սոցիալական ձեռնարկությունները կօգտվեն սոցիալական ներդրումներից՝ կայուն դառնալու և դրական սոցիալական ազդեցություն ունենալու համար: Տարածաշրջանում վենչուրային բարեգործական հիմնադրամներ ստեղծելու համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելուց զատ, ծրագիրը հատուկ բաղադրիչներ կներառի Հայաստանի համար: Հայաստանյան բաղադրիչը, որը մշակվել է Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ համագործակցությամբ, կներառի սոցիալական ձեռնարկություններին COVID-19-ի հետ կապված շտապ աջակցության ֆոնդ, ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրեր, ինչպես նաև սոցիալական նորարարական մրցույթներ՝ ուղղված սոցիալական բիզնեսի նոր մոդելների խթանմանը:

Ակնկալվող արդյունքներ:

- Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների և սոցիալական ձեռնարկությունների հմտությունների, բիզնես ունակությունների որակական աճ
- Սոցիալական ներդրողների քանակի ավելացում
- Սոցիալական ձեռներեցության ոլորտում տարածաշրջանային և տեղական մակարդակի համագործակցության ընդլայնում
- Հանրային ոլորտի, սոցիալական ձեռներեցների և ներդրողների համագործակցության ակտիվացում
- Սոցիալական նորարարության և նոր բիզնես-մոդելների խթանում սոցիալական ձեռնարկությունների և նպատակային բիզնեսների ֆինանսավորման նպատակով: